Հավելված 7
ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/9* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/9-2

ք. Սևան «26» ապրիլի 2018 թ.

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն՝ Գագիկ Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Ռասսի>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 8807200 /ութ միլիոն ութ հարյուր յոթ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելքան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց >> ՓԲԸ	<<Ռասսի>> ՍՊԸ
Ք.Սևան Կարմիր Բանակի 68	Ք. Երևան, Լեռ Կամսարի 8/3
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Սևանի մ/ճ	<< Ամերիաբանկ >> ՓԲԸ
Հ/Հ 163148133255	Հ/Հ 1570003002830100
ՀՎՀՀ 08601459	ՀՎՀՀ 00071397
Տնօրեն՝ _____ Գ. Կարապետյան	Տնօրեն՝ _____ Հ. Գևորգյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«26» ապրիլի 2018 թ. կնքված
ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/9-2* ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	39511100	Վերմակներ Վերմակներ	<<Ռասսիա>> ՍՊԸ ՀՀ	Պատրաստի արտադրանքի չափսերը (200X160X5)սմ, քաշը 3 կգ: Ներսում երկշերտ սինթեպոնե ներդիրը ՝ 450 գ/մ^2 և 350 գ/մ^2 խտությամբ: Երեսացուն 100% բամբակ սատին 1մ^2 քաշը 180 գր: Մատակարարը պետք է ապահովի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: Գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի ցանկության, փաթեթավորման վրա պետք է լինի մակնշում՝ արտադրողի տվյալների, լվացման ձևի և քաշի մասին նշումներով: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:	հատ	5290	1322500	250	Ք. Սևան Կարմիր Բանակի 68	250	2018թ-ի մայիս-հունիս ամիսներին

7	39514500	Երեսի սրբիչներ Երեսի սրբիչներ	<<Ռասսի> > ՍՊԸ <<	Սրբիչը խավավոր է 100% բամբակ բաղադրությամբ: Գործվածքի 1մ² մակերեսային խտությունը 610 գրամ, գործված երկու թելով: Սրբիչի չորս եզրերը ծալված զարդակարված: Գործվածքի խզման ծանրաբեռնվածությունը՝ հենքով 211 Ն (22 կգս), իսկ միջնաթելով՝ 282 Ն (29կգս): Գործվածքի կաթիլայնությունը՝ 80 մմ 30 րոպեում: Ջրակլանողականությունը 300%՝ 10 րոպեում: Պատրաստի արտադրանքի չափսերը 92 x 52 սմ, շեղումները ըստ ԳՈՍՏ-ի: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 10 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Մատակարարը պետք է ապահովի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: Գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի ցանկության, սրբիչի վրա պետք է լինի մակնշում՝ արտադրողի տվյալների, լվացման ձևի և կտորի քաշի մասին նշումներով: Պատվիրատուի պահանջով,	հատ	940	423000	450	Ք. Սևան Կարմիր Բանակի 68	450	2018թ-ի մայիս-հունիս ամիսներին

				մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:							
8	39514100	Լոգարանի սրբիչներ Լոգարանի սրբիչներ	<<Ռասսի> > ՍՊԸ <<	Սրբիչը խավավոր է 100% բամբակ բաղադրությամբ: Գործվածքի 1մ^2 մակերեսային խտությունը 610 գրամ, գործված երկու թելով: Սրբիչի չորս եզրերը ծալված զարդակարված: Գործվածքի խզման ծանրաբեռնվածությունը՝ հենքով 211 Ն (22 կգս), իսկ միջնաթելով՝ 282 Ն (29կգս): Գործվածքի կաթիլայնությունը՝ 80 մմ 30 րոպեում: Ջրակլանողականությունը 300%՝ 10 րոպեում: Պատրաստի արտադրանքի չափսերը 142 x 72սմ, շեղումները ըստ ԳՈՍՏ-ի: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 30 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 5 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման	հատ	1880	846000	450	Ք. Սևան Կարմիր Բանակի 68	450	2018թ-ի մայիս-հունիս ամիսներին

				տարեթիվը: Մատակարարը պետք է ապահովի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: Գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի ցանկության, սրբիչի վրա պետք է լինի մակնշում՝ արտադրողի տվյալների, լվացման ձևի և կտորի քաշի մասին նշումներով: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:							
9	39514200	Խոհանոցի սրբիչ Խոհանոցի սրբիչ	<<Ռասսի> > ՍՊԸ <<	Արտադրատեսակը 100% բամբակյա մանվածքից, վաֆլենման 40 սմ-ից ոչ պակաս լայնությամբ, 80 սմ երկարությամբ: Քաշը 1մ2 մակերեսային խտությունը՝ 285գր: Խզման ծանրաբեռնվածությունը՝ հենքով 670 Ն (68 կգ/ս), իսկ միջնաթելով 352 Ն (36 կգս): Ուղղորդիչ տեխնիկական փաստաթուղթ՝ ԳՈՍՏ 11027-84: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 10 հատ: Արկղերը՝	հատ	299	119600	400	Ք. Սևան Կարմիր Բանակի 68	400	2018թ-ի մայիս-հունիս ամիսներին

				պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Մատակարարը պետք է ապահովի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: Գույնի ընտրությունը ըստ պատվիրատուի ցանկության, փաթեթավորման վրա պետք է լինի մակնշում՝ արտադրողի տվյալների, լվացման ձևի և քաշի մասին նշումներով: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:							
10	39516122	Բարձեր Բարձեր	<<Ռասսի>> ՍՊԸ ՀՀ	Պատրաստի արտադրանքի չափսերը (65X65) սմ, քաշը՝ 2 կգ-ից ոչ պակաս: Բարձը լցոնած է սինտեպոնով, երեսացուն գործվածքը 80% բամբակյա և 20% պոլիէսթեր, մակերեսային խտությունը 275գ/մ^2: Բարձի անկյուններից մեկում պետք է կարված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, լվացման	հատ	2490	498000	200	Ք. Սևան Կարմիր Բանակի 68	200	2018թ-ի մայիս-հունիս ամիսներին

				ձևը և քաշը: Մատակարարը պետք է ապահովի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: Գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի ցանկության: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:							
12	19212600	Անկողնային ծածկոց Անկողնային ծածկոց	ООО ХПТФ Ուկրաինա	Ծածկոցը վանդակավոր կամ այլ նախշերով: Բաղադրությունը՝ բուրդ 75%, վիսկոզա - 20%, բամբակ – 5%, մակերեսային խտությունը ՝ 650 գ/մ2: Պատրաստի արտադրանքի գծային չափսերը - լայնությունը՝ 160 սմ՝ (±) 2սմ, երկարությունը՝ 200(±) 2սմ: Ծածկոցի 5 X 10 սմ չափերով գծի խզման ծանրաբեռնվածությունը պետք է կազմի հենքով ոչ պակաս 230 Ն, իսկ միջնաթելով – 140 Ն, Խամի դիմացկունությունը լվացմանը պետք է կազմի ոչ պակաս 900-920 ցիկլ: Վերին և ներքին եզրերը զարդակարված: Մատակարարը պետք է ապահովի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: Գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի ցանկության, փաթեթավորման վրա պետք է	հատ	5290	1322500	250	Ք. Սևան Կարմիր Բանակի 68	250	2018թ-ի մայիս-հունիս ամիսներին

			.	լինի մակնշում՝ արտադրողի տվյալների, լվացման ձևի և քաշի մասին նշումներով: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:							
19	18341100	Շապիկ, վարտիք /տղամարդու/ Շապիկ, վարտիք /տղամարդու/	<<Ռասսի> > ՍՊԸ <<	Կազմված է տաք շապիկից և տաք վարտիքից: Արտադրված բամբակյա մոխրագույն գույնի գործվածքից /ներսի մասը խավով/, 1մ^2 մակերասյին խտությունը՝ 275 գր: Շապիկը - ուղիղ կտրվածքի, կլոր վզով, կրկնակի ծալված շերտաբազիկով: Թևերը ուղիղ միակար մշակված է կրկնակի մանժետով, մանժետը միակար միացման կարերի: Շապիկի փեշերը ծալված, զարդակարված: Վարտիք երկարաճիտ տաբատանման, դիմացից լայնացվող, դիմացի կարի վրա մշակվում է բացվածք /հիգիենիկ կարիքների համար/, գոտին էլաստիկ ժապավենով: Վարտիքի ներքևի եզրերը մշակված է կրկնակի մանժետով, մանժետը միակար միացման կարերի: Շապիկի	հատ	2690	1129800	420	Ք. Սևան Կարմիր Բանակի 68	420	2018թ-ի մայիս-հունիս ամիսներին

				մեջքամասի վերին եզրին և վարտիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասանի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 30 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Տուփերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, լվացման ձևը և քաշը: Չափսերը անհատական ըստ պատվիրատուի: Մատակարարը պետք է ապահովի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: Ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի ցանկության: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:							
34	18111100	Արտահագուստ	<<Ռասսի>> ՍՊԸ	Արտահագուստի հիմնական գույնը մուգ կապույտ է:	հատ	7490	3145800	420	Ք. Սևան Կարմիր	420	2018թ-ի մայիս-հունիս

		Արտահագուստ	<<	Հիմնական կտորը ջրակայուն է, 42% բամբակ, 58% պոլիեսթեր բաղադրությամբ, 285 գ/մ^2 մակերեսային խտությամբ: Թելերի քանակը 10 սմ վրա ըստ հիմքի պետք է կազմի 430± 5, ըստ միջնաթելի 175 ± 5, 50 x 200 չափսի կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի 2450Ն, ըստ միջնաթելի 560 Ն/կգս, կտորի ջրամեկուսացման ելակետային տվյալը պետք է կազմի ոչ պակաս 2,000ՊԱ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ոչ պակաս 1,800ՊԱ: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի պետք է կազմի ոչ ավել -2.0%, ըստ միջնաթելի ± 2.0%: Արտահագուստը բաղկացած է երկարացված բաճկոնից և տաբատից: Բաճկոնի երկարությունը գոտկատեղից ներքև, կոճկվում է լանջափեշերի տակ ներկարված շղթայով: Բաճկոնի գոտկատեղում մշակված է էլաստիկ ժապավենով գոտի, նստված օձիքով, թևերը և գոտին ռետինե մանժետով: Բաճկոնը փեշամասում տեղադրված է ներկարված շղթայով երկու թեք գրպաններ: Գրպանները թեքված են դեպի ներս, կենտրոնական փակվող շղթայի նկատմամբ 55^0					Բանակի 68		ամիսներին

				թեքությամբ: Մեջքը վերին կտրվածքով, թևքերը միակար թեզանիքներով և կտրվածքով: Տաբատի վերևի եզրն ավարտվում է գոտիով, որի մեջ տեղադրված է 8 սմ լայնությամբ ռեզին և չափսի կարգավորման ժապավեն: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է մետաքսյա աստառ՝ հիմնական կտորի գույնին համարժեք՝ 165 գ/մ2 մակերեսային խտությամբ, Գրպանները թեք են: Ետնամասի աջ կողմում ունի կոճակով կոճկվող ձևավոր կափույրով գրպան: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Չափսերը անհատական ըստ պատվիրատուի : Մատակարարը պետք է ապահովի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: Ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի ցանկության, կոստյումի վրա պետք է լինի մանկնշում՝ արտադրողի							

				տվյալների, լվացման ձևի և կտորի քաշի մասին նշումներով: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:							

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա հունիսի 30-ը:

**Եթե իրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Տնօրեն՝ __________ Գ. Կարապետյան	Տնօրեն՝ __________ Հ. Գևորգյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«26» ապրիլի 2018 թ. կնքված
ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/9-2 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39511100	Վերմակներ					1322500								1322500
7	39514500	Երեսի սրբիչներ						423000							423000
8	39514100	Լոգարանի սրբիչներ						846000							846000
9	39514200	Խոհանոցի սրբիչ						119600							119600
10	39516122	Բարձեր					498000								498000
12	19212600	Անկողնային ծածկոց					1322500								1322500
19	18341100	Շապիկ, վարտիք /տղամարդու/					1129800								1129800
34	18111100	Արտահագուստ						3145800							3145800

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Տնօրեն Կարապետյան

ՎԱՃԱՌՈՂ

Տնօրեն Հ. Գևորգյան